

յարկի մէջ գտնուած խորանները կոչում են Գաբրիէլ և Միքայէլ հրեշտակապետների անուններով։ Ափսօն, որ հիմնադիր վարդապետներից մէկի և այդ ժամանակուայ վանահօր անունները չեն կարդացւում։ ըստ Կիրակոս պատմազրի յիշած անունների՝ մատուռապէս այս միջոցին վանահօրը պէտք է եղած լինի Յովասափր։

Երկրորդ յարկի տարածութիւնը արևելքից—արևմուաք 7 արշին է, իսկ հարաւաց—հիւախ 10 արշին 4 վերշոկ. բարձրութիւնը 10 արշին 2 վերշոկ. խորաններից իւրաքանչյուրի երկարութիւնն է 2 արշին 8 վերշոկ, լայնութիւնը 1 արշին 14 վերշոկ. բարձրութիւնը 3 արշին ու կէս։

## VII

### ՍՈՒՐԲ ԳԵՂՐԴ

Վանքի հանդէս, հարաւային կողմից, ըլլակի վրայ կառւցուած է մի փոքր սագաշին եկեղեցի սուրբ Գէորգի անունով. թէ արտաքուստ և թէ ներքուստ եկեղեցին շինուած է սրբատաշ քարով. թէ պատերի, թէ կաթուղիկէի և թէ գմբէթի քարերից շատերն այժմ թափուած են, արտաքուստ, կաթուղիկէի շուրջն արձանագրուած է.

«ԶԳ—703 հայոց և 1254 ֆրկչական թվ. Տէր Աստուած ոզրոմեա Ասչատուր վարդապետի ու Բարտողին շինուաց եկեղեցւոյ և ամենայն աշխատողացն ի ամա ամէն»։

Կիրակոս պատմազրի տաելով Բարսեղը Ասչատուր վարդապետի եղբայրն է. պատմազրին այս եկեղեցու շինութիւնը տուբՀարիւր երեք (1854 ֆրկչական) թուին է նշանակում<sup>1)</sup>, այն ինչ արձանագրութիւնը 703 թիւն է կրում։ Այս թիւրիմացութիւնը մննք վերապում ենք Կիրակոս Գանձակեցու պատմութիւնը հրատարակողի սխալունքին<sup>2)</sup>. որովհետեւ ինքը պատմազրին այդ թուականին կենդանի չէր կարող լինել. Կիրակոսն իւր պատմութիւնը շարունակում է մինչև ԶԺԴ—714 հայոց և 1265 ֆրկչական թիւը. այդ մէկ երկրորդ՝ իւր իսկ վկայութեամբ Կիրակոսն աշակերտ և զործակցել է Վանական վարդապետին—մանրամասն

<sup>1)</sup> «Եւ յաւելարիւր երեւ թօփն Խաչուուր վարդապետն, և եղբայր իւր Բարսեղն, շինեաց եկեղեցի մի երեխութեամի, հանդէս վանիցն, գմբէթաւը, յանձն սրբոյն Եղբայրին նոյնը, էջ 130»։

<sup>2)</sup> Ենք ձեզն է Մատուցյի հրատարակութիւնը. որդեալ նոյն պատը իրենամատ է Վանական հրատարակութեան մէջ։

պատմում է Վանականի ու իւր գերութիւնը,—իսկ վերջինս վախճանուել է 2—700 հայոց, 1251 փրկչական թուքն. հաւանական չէ, որ նա Վանականի մահից յետոյ դարձեալ 103 տարի ապրէր, Արքի մեռազրի և յեւթհարիւրը արտազրողները կամ տպազրելիս դարձրել են յութհարիւր։

Սուրբ Գէորգի փարքիկ, պիրուն գմբէթը կանգնած է 4 ժողովամտրների վրայ. յատակը սալամարով է ծածկուած. եկեղեցու թէ պատերը և թէ գմբէթը չորս կողմից լուսամուտներ ունեն: Բնմի աջ և ձախ կողմերում կան պատարգամատոյց խորաններ: Հարաւային պատի վրայ արձանագրուած է.

Եթ աւանի որրոյն Գէորգայ ա պատարագ Շէքանչանի է անբափան։

Եկեղեցու թէ երկարութիւնը և թէ լայնութիւնը 6 արշին է. բնմի՝ բարձրութիւնը 1 արշին 2 միլիոնի: Տաճարի շուրջը կան խաչքարեր և գերեզմանաքարեր. քարերից մէկի վրայ զրուած է. «Այս է հանդիսան Մկրտիչ պարսն Տր. ի ԽօնիԴ—1124 հայոց ու 1675 փրկչական թուքն»:

## VIII

### ԴՈՅ ՄԽԻԹԱՐԻ ԴԱՄԲԱՄԱՆԸ

Սուրբ Գէորգ եկեղեցոց դէպի արհմուածք, մի փոքր տւելի բարձր բլրի վրայ կանգնած է հասարակ քար ու կրավ շինուած և փայտածածկ շէնք, որ երկու սենեւակներից է բաղկացած. արևելեան մասը յարմարացրած է բնմի՝ խաչքանզ ու վէմ քարով, իսկ արևմտեան մասում, փոքրիկ շրջանի մէջ զրուած են երկու տապանաքարեր. և հնայիլով, որ մէկի վրայ զրուած է Գրիգոր քահանայ, իսկ միւսի վրայ Աղան, հենց այս տեղն է համարւում Գոշի ամիւնը պարտանակող դամբարանը: Թէ տեղացիները և թէ հեռու գիւղերից գայիս են այս տեղից հող տանելու՝ ցասումներից ազատուելու և հիւանդութիւններից բռւժուելու համար. այս միւնոյն բանը լինուած էր և կիրակոս պատմազրի օրերում<sup>1)</sup>:

Երբաժի պարզութիւնից էլ երեսում է Մխիթար Գոշի հոգու

<sup>1)</sup> Եւս առեալ հանգուցին զնո առաջի զրան եկեղեցայն գնդրակունի, որ կոյ է զլուխ գնացն յարձման հորման: Եւ մինչն ըստօր զերծված նոյն օգնէ բառագնելը, որը հաւառավ պատմին յաջօթն նըրա, և զնոց տեղույն հանապազ տանեն է պէտա հիւանդաց մարդոյ և մեսուսոյ, որ Առաւած զփառաւորիչն իւր փառուորէ կննդանութեամբ և մահուամբու:—Նոյն. էջ 128.